

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ Արմավիրի մարզպետարանի 2018 թվականի
ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ**

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 19/7 որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ Արմավիրի մարզպետարան:
Հաշվեքննության առարկան	2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեություն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2019 թվականի սեպտեմբերի 24-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ ժամանակահատվածում:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունը «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրի նախապայմանների ապահովման նպատակով իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ինչպես նաև Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 - Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 200 – Ֆինանսական աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 400 – Համապատասխանության աուդիտի հիմնարար սկզբունքները» ստանդարտներով:
Հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի մեթոդաբանության, վերլուծության և միջազգային կապերի վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը:

I. ԱՆԿԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել ՀՀ Արմավիրի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) կողմից 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն) և Մարզպետարանի կողմից ծրագրերի կատարման համապատասխանությունն ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մարզպետարանի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի:

Մարզպետարանի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ծրագրերի կատարումն իրականացնել ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից և/կամ անհամապատասխանություններից զերծ ֆինանսական հաշվետվություն:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվության վերաբերյալ: Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի Բարձրագույն Մարմնի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մշակված «Հանրային հատվածի արտաքին ֆինանսական աուդիտի մեթոդաբանության» և «Հանրային հատվածի արտաքին համապատասխանության աուդիտի մեթոդաբանության» համաձայն: Այդ մեթոդաբանություններով պահանջվում է որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ ֆինանսական հաշվետվությունը զերծ է էական խեղաթյուրումներից և ծրագրերի կատարումը զերծ է էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվությունում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և Մարզպետարանի կողմից ծրագրերի կատարման էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումից:

Ռիսկերի նման գնահատում իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ կապված ֆինանսական հաշվետվության պատրաստման, ճշմարիտ ներկայացման և ծրագրերի իրականացման հետ՝ կազմելու տվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր, սակայն ոչ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Հաշվեքննության աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվության պատրաստման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելու, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության ամբողջական ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ՝ համապատասխանության հաշվեքննության մեր կարծիքը հիմնավորելու համար:

Մենք գտնում ենք, որ չենք ձեռք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ՝ ֆինանսական հաշվեքննության մեր կարծիքը հիմնավորելու համար:

Համապատասխանության հաշվեքննություն՝ բացասական եզրահանգման հիմք

Ինչպես ներկայացված է սույն հաշվետվության 2-րդ մասի 1-ին և 2.2 կետերում, Մարզպետարանում և իր ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաշվապահական հաշվառումը հիմնականում չի վարվում կրկնակի գրանցման եղանակով, ինչպես պահանջվում է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմնականում չի իրականացվում անալիտիկ և սինթետիկ հաշվառում, ինչպես պահանջվում է «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով: Այդ առումով Մարզպետարանի կողմից 2018 թվականին նախադպրոցական, տարրական, հիմնական և միջնակարգ կրթության կազմակերպման նպատակով հանրակրթական, հատուկ և ներառական ուսուցման համար պետական ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված 6,926,522.6 հազ. դրամ գումարի չափով

սուբսիդիաների, ինչպես նաև «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի շրջանակում Մարզպետարանի կողմից կատարված 499,169.3 հազ. դրամ ծախսերի հաշվառումը չի կատարվել «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջների համաձայն:

Ֆինանսական հաշվեքննություն՝ «Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց» եզրահանգման հիմք

Ինչպես ներկայացված է սույն հաշվետվության 2-րդ մասի 1-ին և 2.2 կետերում, Մարզպետարանում և իր ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաշվապահական հաշվառումը հիմնականում չի վարվում կրկնակի գրանցման եղանակով, ինչպես պահանջվում է «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ կետով և հիմնականում չի իրականացվում անալիտիկ և սինթետիկ հաշվառում, ինչպես պահանջվում է «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով: Արդյունքում, մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ Մարզպետարանի կողմից 2018 թվականին նախադպրոցական, տարրական, հիմնական և միջնակարգ կրթության կազմակերպման նպատակով հանրակրթական, հատուկ և ներառական ուսուցման համար պետական ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված 6,926,522.6 հազ. դրամ գումարի չափով սուբսիդիաների հաշվին պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կատարված ծախսերի վերաբերյալ, ինչպես նաև «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի շրջանակում Մարզպետարանի կողմից կատարված 499,169.3 հազ. դրամ ծախսերի վերաբերյալ:

Ինչպես ներկայացված է սույն հաշվետվության 2-րդ մասի 2.3 կետում, Մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպություններում վճարումների որոշ մասը 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի նոյեմբերի 30-ը կատարվել է կանխիկ դրամական միջոցներով, ինչպես նաև կանխիկ գործառնությունների փաստաթղթավորումը կատարվել է «Դրամարկղային գործառնությունների իրականացման, դրանց փաստաթղթավորման, դրամարկղային գրքի վարման, կանխիկ դրամի դրամարկղ մուտքագրման և ելքագրման» կարգով սահմանված պահանջների խախտումներով: Արդյունքում, մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ Մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային

կազմակերպությունների 2018 թվականի վճարումների վերաբերյալ: Սույն ֆինանսական հաշվետվության վրա կանխիկ վճարումների ամբողջական ազդեցությունը որոշված չէ:

Համապատասխանության հաշվեքննություն՝ բացասական եզրահանգում

Մեր կարծիքով «Բացասական եզրահանգման հիմք» պարագրաֆում նկարագրված հարցերի նշանակալիության հետևանքով, Մարզպետարանի կողմից ծրագրերի կատարումը չի համապատասխանում ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին, որն իր ազդեցությունն ունի ֆինանսական հաշվետվության վերաբերյալ կարծիքի վրա, ինչպես նկարագրված է «Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց» պարագրաֆում:

Ֆինանսական հաշվեքննություն՝ «Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց» եզրահանգում

«Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց» եզրահանգման հիմք պարագրաֆում ներկայացված հարցերի նշանակալիության հետևանքով՝ մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ՝ ֆինանսական հաշվեքննության մեր կարծիքը հիմնավորելու համար: Հետևաբար, մենք չենք արտահայտում կարծիք ֆինանսական հաշվետվության վերաբերյալ:

Լ. Յոլյան՝

ՀՀ Հաշվեքննիչ պալատի նախագահ

20 դեկտեմբերի 2019 թվական

ՀՀ Հաշվեքննիչ պալատ

Բաղրամյան 19 փող., ք. Երևան, Հայաստան

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ծրագիր	Տարեկան ճշտված պլան հազ. ՀՀ դրամ	Փաստ հազ. ՀՀ դրամ	Փաստացի ծախս հազ. ՀՀ դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ	8,287,111.4	8,252,437.1	8,195,826.7
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	506,438.6	499,169.3	498,755.1
Այլընտրանքային ծառայության ապահովում	3,930.0	3,930.0	3,930.0
Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	54,608.0	54,605.0	54,605.0
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	-	(1,281.8)	(1,281.8)
Մշակութային օբյեկտների հիմնանորոգում	18,636.7	18,636.7	18,636.7
Մշակութային միջոցառումների իրականացում	2,395.0	805.0	805.0
Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100- ամյակին նվիրված միջոցառումների իրականացում	7,300.0	7,300.0	7,300.0
Նախադպրոցական կրթություն	138,883.9	138,882.5	138,882.5
Հանրակրթական ուսուցում/Տարրական ընդհանուր կրթություն	2,255,806.6	2,255,805.5	2,255,805.5
Հատուկ կրթություն/Տարրական ընդհանուր կրթություն	61,076.7	61,076.7	61,076.7
Ներառական կրթություն/Տարրական ընդհանուր կրթություն	212,713.1	212,713.1	212,713.1
Հանրակրթական ուսուցում/Հիմնական ընդհանուր կրթություն	3,130,699.3	3,130,654.5	3,130,654.5
Հատուկ կրթություն/Հիմնական ընդհանուր կրթություն	78,651.8	78,651.8	78,651.8
Ներառական կրթություն/ Հիմնական ընդհանուր կրթություն	222,551.5	222,551.5	222,551.5
Հանրակրթական ուսուցում/Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն	806,808.2	806,748.2	806,748.2
Ներառական կրթություն/Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն	19,438.8	19,438.8	19,438.8
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում	38,039.8	38,039.8	38,039.8
Կրթական օբյեկտների հիմնանորոգում	125,360.0	119,092.0	62,067.8
Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	4,547.4	4,499.7	4,499.7
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	291,768.0	290,334.8	290,334.8
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	307,458.0	290,784.1	291,612.1

Քաղվածք 2018 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունից՝ հաստատված ՀՀ
Ազգային ժողովի 2019թ. հունիսի 20-ի ԱԺՈ-003-Ն որոշմամբ:

II. ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐ

1. Մարզպետարանում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման իրականացման վերաբերյալ

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Մարզպետարանն իր հաշվապահական հաշվառումը չի իրականացնում «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտերով:

Համաձայն 2014 թվականի հուլիսի 23-ի ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 463-Ն հրամանի՝ Մարզպետարանը և իր ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունները պետք է անցում կատարեին հաշվապահական հաշվառման նոր համակարգին 2018 թվականի հունվարի 1-ից:

Մարզպետարանի կողմից ձեռք է բերվել հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգ, սակայն 2018 թվականին հաշվապահական հաշվառման վարումը չի իրականացվել համակարգչային ծրագրով: Մարզպետարանի կողմից հաշվապահական հաշվառումը հաշվապահական ավտոմատացված համակարգի՝ ծրագրային ապահովման միջոցով իրականացման աշխատանքները մեկնարկել են 2019 թվականին և մինչև հաշվեքննության ավարտը դեռ ավարտված չեն եղել:

Մարզպետարանում վարվող հաշվապահական հաշվառումը չի ապահովել կրկնակի գրանցումների եղանակով հաշվառման իրականացում, անալիտիկ (վերլուծական) և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների հաշվառում:

Մարզպետարանի աշխատավարձի հաշվարկները 2018 թվականին իրականացվել են MS EXCEL ծրագրով, ընդ որում արձակուրդային վճարների, վերջնահաշվարկների, անաշխատունակության նպաստների, պարգևատրումների և աշխատողներին տրվող օգնությունների հաշվարկները կատարվել են առանձին: Յուրաքանչյուր ամսվա համար աշխատողների համար հաշվարկված համախառն եկամուտների հաշվարկներ՝ վերահաշվարկներ չեն իրականացվել: Աշխատողների համար հաշվարկված առանձին տեսակի եկամուտներից հարկերի և այլ վճարների պահումները կատարվել են առանձին հաշվարկներով: Ամսական կտրվածքով աշխատողների համախառն եկամտի վերահաշվարկներում դրանք չեն կոնսոլիդացվել, որի արդյունքում աշխատավարձի ամսական

հաշվարկներում որոշ դեպքերում ներառվել են այլ հաշվետու ժամանակաշրջաններում (ամիսներում) հաշվեգրված եկամուտներ: Արդյունքում, հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Մարզպետարանը չի կարողացել ամբողջությամբ վերականգնել Մարզպետարանի եկամտային հարկի հաշվետվությամբ ներկայացված հաշվարկների հիմնավորումները:

Մարզպետարանի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվապահական հաշվառման վարման չիրականացումը հանգեցնում է հսկողության համակարգի թերացմանը և ֆինանսական հաշվետվությունների բացակայությանը, ինչպես նաև Մարզպետարանի ակտիվների, պարտավորությունների, ծախսերի և եկամուտների կառավարման անհնարինությանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք Մարզպետարանին անցում կատարել հաշվապահական հաշվառման նոր համակարգին՝ ապահովելով հաշվապահական հաշվառման վարումը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված չափանիշներին համապատասխան ավտոմատացված համակարգով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման իրականացման մասով տեղեկացնում ենք, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի և մարզպետարանի ենթակայության ՊՈԱԿ-ների պատասխանատուներին հանձնարարվել է եռամսյա ժամկետում ամբողջությամբ ավարտել հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի ներդրման աշխատանքները, որի արդյունքում կապահովվի 2014 թվականի ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 463-Ն հրամանի պահանջների կատարումը, ինչպես նաև ՊՈԱԿ-ներում հաշվապահական հաշվառումը կիրականացվի կրկնակի գրանցման եղանակով՝ անալիտիկ և սինթետիկ հաշիվների հաշվառմամբ:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի մասով ներկայացված եկամտային հարկի հաշվարկներին կտրվեն ճշգրտումներ, իսկ համակարգի ներդրման դեպքում կբացառվեն նամանատիպ շեղումները:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ չեն ներկայացվել:

2. Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին

Մարզպետարանը 2018 թվականին նախադպրոցական, տարրական, հիմնական և միջնակարգ կրթության կազմակերպման նպատակով հանրակրթական, հատուկ և ներառական ուսուցման համար կրթական պետական ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրել է 6,926,522.6 հազ.դրամ գումարի չափով սուբսիդիաներ:

2.1 Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման իրականացում

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպություններն իրենց հաշվապահական հաշվառումը չեն իրականացնում «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտերով: Համաձայն 2014 թվականի հուլիսի 23-ի ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 463-Ն հրամանի՝ Մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունները պետք է անցում կատարեն հաշվապահական հաշվառման նոր համակարգին 2018 թվականի հունվարի 1-ից:

Հիմնականում, պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ձեռք է բերվել հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգ, սակայն դեռևս հաշվապահական հաշվառման վարումը չի կատարվում համակարգչային ծրագրով:

Մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման վարման չիրականացումը «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտերին համապատասխան հանգեցնում է հսկողության համակարգի թերացմանը և ֆինանսական հաշվետվությունների բացակայությանը, ինչպես նաև Մարզպետարանի և իր ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, ծախսերի և եկամուտների կառավարման անհնարինությանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք Մարզպետարանին պատշաճ կերպով համակարգել իր ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման իրականացումը «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտերով՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված չափանիշներին համապատասխան ավտոմատացված համակարգով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման իրականացման մասով տեղեկացնում ենք, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի և մարզպետարանի ենթակայության ՊՈԱԿ-ների պատասխանատուներին հանձնարարվել է եռամսյա ժամկետում ամբողջությամբ ավարտել հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի ներդրման աշխատանքները, որի արդյունքում կապահովվի 2014 թվականի ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 463-Ն հրամանի պահանջների կատարումը, ինչպես նաև ՊՈԱԿ-ներում հաշվապահական հաշվառումը կիրականացվի կրկնակի գրանցման եղանակով՝ անալիտիկ և սինթետիկ հաշիվների հաշվառմամբ:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ չեն ներկայացվել:

2.2 Պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաշվապահական հաշվառման իրականացումը թղթային եղանակով՝ առանց կրկնակի գրանցման

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաշվապահական հաշվառում ոչ միայն չի վարվում «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքին համապատասխան, այլ հաշվապահական հաշվառումը ընդհանրապես չի վարվում կրկնակի գրանցման եղանակով: Պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաշվապահական հաշվառումը չի ապահովում կրկնակի գրանցումների եղանակով հաշվառման իրականացում, անալիտիկ (վերլուծական) և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների հաշվառում:

Ստորև ներկայացված են կրկնակի գրանցմամբ հաշվառում չունեցող պետական ոչ առևտրային կազմակերպությունները՝

Հ/հ	Պետական ոչ առևտրային կազմակերպություններ	Տրամադրված ֆինանսավորում (հազ. դրամ)
1	Վաղարշապատի Ջորավար Անդրանիկի անվ. թիվ 12 հիմնական դպրոց	136,202.5
2	Արմավիրի թիվ 5 միջնակարգ դպրոց	202,194.8
3	Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց	148,409.5
4	Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոց	194,145.7
5	Գրիբոյեդովի միջնակարգ դպրոց	51,049.1
6	Ոսկեհատի միջնակարգ դպրոց	56,197.3
7	Տալվորիկի հիմնական դպրոց	17,008.7
8	Սարգսրապատի միջնակարգ դպրոց	114,256.5
9	Նալբանդյանի միջնակարգ դպրոց	93,607.3
10	Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց	40,031.7
11	Վաղարշապատի Երվանդ Օտյանի թիվ 7 հիմնական դպրոց	81,854.6
12	Լենուդու միջնակարգ դպրոց	47,389.2
13	Դաշտի միջնակարգ դպրոց	33,957.1
14	Այգեշատի միջնակարգ դպրոց Արմ.	38,705.6
15	Երվանդաշատի միջնակարգ դպրոց	29,453.9
16	Ֆերիկի հիմնական դպրոց	25,709.9
17	Արմավիրի թիվ 1 հատուկ/օժանդակ/ դպրոց	60,185.0
18	Ալաշկերտի միջնակարգ դպրոց	43,646.9
19	Մայիսյանի միջնակարգ դպրոց	61,893.8
20	Բաղրամյանի միջնակարգ դպրոց	84,967.2
21	Արմավիրի թիվ 9 հիմնական դպրոց	38,133.0
22	Ջրառատի միջնակարգ դպրոց	79,675.0
23	Վարդանաշենի միջնակարգ դպրոց	39,205.4
24	Մեծամորի միջնակարգ դպրոց	39,680.6
25	Մուսալեռի միջնակարգ դպրոց	57,742.8
26	Վաղարշապատի Ներսիսյան թիվ 6 հիմնական դպրոց	93,901.8
27	Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց	109,474.3
28	Զարթոնքի միջնակարգ դպրոց	51,326.8
29	Շահումյանի միջնակարգ դպրոց	43,851.7
30	Վանանդի միջնակարգ դպրոց	46,070.6
31	Ծաղկալանջի միջնակարգ դպրոց	41,160.5
32	Մերձավանի միջնակարգ դպրոց	77,195.0
33	Նորակերտի միջնակարգ դպրոց	71,585.4

Հ/հ	Պետական ոչ առևտրային կազմակերպություններ	Տրամադրված ֆինանսավորում (հազ. դրամ)
34	Արգավանդի միջնակարգ դպրոց	80,794.9
35	Հովտամեջի միջնակարգ դպրոց	38,143.9
	Ընդամենը	2,468,808.0

Ստորև ներկայացված ոչ առևտրային կազմակերպությունները հաշվապահական հաշվառումը վարել են հին հաշվային պլանով (Խորհրդային Միության տարիներին գործող) և կազմել են համապատասխան մեմորիալ օրդերներ, որոնք մասամբ ապահովել են կրկնակի գրանցում՝ հանրագումարային տվյալներով:

Հ/հ	Պետական ոչ առևտրային կազմակերպություններ	Տրամադրված ֆինանսավորում (հազ. դրամ)
1	Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոց	117,483.5
2	Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց	186,809.3
3	Ամբերդի միջնակարգ դպրոց	52,196.2
	Ընդամենը	356,489.0

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ վերոնշյալ կազմակերպությունների կողմից աշխատավարձի ամսական հաշվարկները կազմվում են թղթային, ձեռագիր եղանակով և որոշ դեպքերում չեն հաստատվում գլխավոր հաշվապահի և տնօրենի կողմից: Ի լրումն՝ թղթային, ձեռագիր եղանակով պատրաստված հաշվարկներում առկա են հետևյալ հիմնական թերությունները՝

- աշխատավարձի հաշվարկներում և Մարգալետարանին տրամադրվող հաշվետվություններում կատարվում են ձեռքով ուղղումներ, առանց պատշաճ հաստատման.
- աշխատավարձի հաշվարկներում չի նշվում համապատասխան հաշվետու ամիսը.
- աշխատավարձի հաշվարկների համապատասխան հանրագումարները թվաբանորեն ճիշտ չեն հաշվարկված.
- աշխատավարձի հաշվարկների աղյուսակների վերնագրերը չեն համապատասխանում հաշվարկի բովանդակությանը:

Ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կրկնակի գրանցմամբ հաշապահական հաշվառման չիրականացումը հանգեցնում է հսկողության գործընթացի թուլացմանը և ֆինանսական հաշվետվությունների բացակայությանը, ինչպես նաև Մարգալետարանի և իր

ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, ծախսերի և եկամուտների կառավարման անհնարինությունը:

Ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հաշվառման թղթային, ձեռագիր եղանակով վարումը հանգեցնում է փաստաթղթերի ոչ պատշաճ պատրաստմանը և ներկայացմանը, ինչպես նաև ստուգման անհնարինությունը:

Առաջարկություն

Համաձայն 2010 թվականի հուլիսի 15-ի ՀՀ կառավարության թիվ 954-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն՝ պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 46-րդ կետի 6-րդ ենթակետի՝ հանրակրթության բնագավառում տարածքային կառավարման մարմնի իրավասություններն են հանրակրթական դպրոցի ընդհանուր կառավարման իրականացումը, նրա բնականոն գործունեության ապահովումը և դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար պատասխանատվություն կրելը: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում ենք Մարզպետարանին պատշաճ կերպով համակարգել իր ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման իրականացումը «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտերով՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված չափանիշներին համապատասխան ավտոմատացված համակարգով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման իրականացման մասով տեղեկացնում ենք, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի և մարզպետարանի ենթակայության ՊՈԱԿ-ների պատասխանատուներին հանձնարարվել է եռամսյա ժամկետում ամբողջությամբ ավարտել հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի ներդրման աշխատանքները, որի արդյունքում կապահովվի 2014 թվականի ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 463-Ն հրամանի պահանջների կատարումը, ինչպես նաև ՊՈԱԿ-ներում հաշվապահական հաշվառումը կիրականացվի կրկնակի գրանցման եղանակով՝ անալիտիկ և սինթետիկ հաշիվների հաշվառմամբ:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ չեն ներկայացվել:

2.3 Պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կանխիկ վճարումներ

Այլ տեղեկատվություն

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ ստորև ներկայացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կատարվել են աշխատավարձի կանխիկ վճարումներ՝

Հ/հ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն	Կանխիկ վճարումների գումար (հազ. դրամ)
1	Վաղարշապատի Ջորավար Անդրանիկի անվ.թ իվ 12 հիմնական դպրոց	22,707.1
2	Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց	3,843.7
3	Նալբանդյանի միջնակարգ դպրոց	3,935.0
4	Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց	15,413.6
5	Լենուդու միջնակարգ դպրոց	5,462.9
6	Բաղրամյանի միջնակարգ դպրոց	40,462.0
7	Արմավիրի թիվ 9 հիմնական դպրոց	26,182.8
8	Ջրառատի միջնակարգ դպրոց	4,846.7
9	Զարթոնքի միջնակարգ դպրոց	30,765.9
10	Նորակերտի միջնակարգ դպրոց	30,392.4
	Ընդամենը	184,012.1

Կանխիկ վճարումների կատարումը հանգեցնում է հսկողության գործընթացների թուլացմանը, Մարզպետարանի կողմից հանրակրթական դպրոցի ընդհանուր կառավարման դժվարացմանը, ինչպես նաև կարող է հանգեցնել դրամական միջոցների առավել հեշտ յուրացմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք աշխատավարձի վճարումները կատարել գանձապետական համակարգով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

ՊՈԱԿ-ների կողմից կանխիկ գործառնությունները 2018 թվականի դեկտեմբեր ամսից չեն իրականացվում, քանի որ վերջիններս անցել են գանձապետական հաշիվների և գործառույթները իրականացնում են Client TREASURY համակարգով:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ չեն ներկայացվել, ներկայացվել է բացատրություն:

2.4 Պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից Մարզպետարանին ներկայացված հաշվետվություններ

Անհամապատասխանություն կամ խեղաթուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից Մարզպետարանին ներկայացված «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» հաշվետվությունների ընթացիկ ծախսերում ներկայացված «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճաներ» 4111 հոդվածով ներկայացված փաստացի և դրամարկղային ծախսերը համապատասխանաբար շեղվում են աշխատավարձի հաշվարկներով ներկայացված ծախսերից և կազմակերպությունների կողմից կատարված վճարումներից: Ստորև ներկայացնում ենք շեղումների աղյուսակը փաստացի և դրամարկղային ծախսերի մասով՝

Հ/հ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն	Փաստացի ծախս ըստ հաշվետվության	Փաստացի ծախս ըստ աշխատավարձի հաշվարկների	Շեղում
Ա	Բ	Գ	Դ	Ե=Գ-Դ
1	Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց	151,119.3	151,324.0	(204.7)
2	Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան թիվ 7 հիմնական դպրոց	65,705.3	65,769.6	(64.3)
3	Աարմավիրի թիվ 8 հիմնական դպրոց	127,893.1	127,556.1	337.0
4	Ալաշկերտի միջնակարգ դպրոց	39,991.9	39,793.4	198.5
5	Այգեշատի միջնակարգ դպրոց	42,824.5	42,829.5	5.0
6	Արմավիր քաղաքի N9 հիմնական դպրոց	35,535.7	35,449.3	86.4
7	Բաղրամյանի միջնակարգ դպրոց	65,863.0	66,702.7	(839.7)
8	Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց	47,878.2	47,379.1	499.1

9	Ջրառատի Թ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց	64,163.4	64,092.4	71.0
10	Երվանդաշատի միջնակարգ դպրոց	27,657.8	27,632.2	25.6
11	Զարթոնք միջնակարգ դպրոց	45,233.6	45,438.6	205.0
12	Լենուդու միջնակարգ դպրոց	42,597.3	42,523.0	74.3
13	Հովտամեջի միջնակարգ դպրոց	36,529.9	36,279.2	250.7
14	Նալբանդյան միջնակարգ դպրոց	79,616.3	79,707.0	91.7
15	Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց	38,561.6	38,210.1	351.5
16	Նորակերտի միջնակարգ դպրոց	59,038.1	59,117.0	(33.9)
17	Շահումյանի միջնակարգ դպրոց	38,690.3	38,644.4	45.9
18	Սարգսրապատի միջնակարգ դպրոց	103,164.3	102,962.8	201.5
19	Վաղարշապատի ներսիսյան թիվ 6 հիմնական դպրոց	84,966.2	85,051.2	(85.0)
	Ընդամենը	1,197,029.8	1,196,461.6	1,123.9

Հ/Հ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն	Դրամարկղային ծախս ըստ հաշվետվության	Դրամարկղային ծախս ըստ վճարումը հաստատող փաստաթղթերի	Շեղում
Ա	Բ	Գ	Դ	Ե=Գ-Դ
1	Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց	151,112.4	151,067.5	44.9
2	Աարմավիրի թիվ 8 հիմնական դպրոց	128,131.4	128,123.7	7.7
3	Ալաշկերտի միջնակարգ դպրոց	40,740.4	40,752.4	12
4	Այգեշատի միջնակարգ դպրոց	42,824.5	42,826.1	1.6
5	Արմավիր քաղաքի N9 հիմնական դպրոց	35,535.7	35,506.0	29.8
6	Բաղրամյանի միջնակարգ դպրոց	66,001.4	65,723.9	277.5
7	Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց	47,875.5	47,376.1	499.4
8	Ջրառատի Թ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց	64,388.9	64,891.6	(502.7)
9	Լենուդու միջնակարգ դպրոց	43,134.1	43,208.7	(74.6)
10	Մայիսյանի միջնակարգ դպրոց	43,238.1	43,187.5	50.6
11	Նալբանդյան միջնակարգ դպրոց	80,336.1	80,315.1	21.0

12	Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց	38,561.6	38,395.3	166.3
13	Նորակերտի միջնակարգ դպրոց	59,083.1	58,978.2	104.9
14	Շահումյանի միջնակարգ դպրոց	38,699.7	38,820.1	(120.4)
15	Սարգսյանի միջնակարգ դպրոց	103,164.3	103,135.6	28.7
16	Վաղարշապատի ներսիսյան թիվ 6 հիմնական դպրոց	84,983.0	85,072.8	(89.8)
	Ընդամենը	1,067,810.2	1,067,380.6	531.5

Վերոնշյալ շեղումները հանգեցնում են Մարզպետարանին ներկայացվող հաշվետվությունների խեղաթյուրմանը, պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեբիտորական պարտքերի խեղաթյուրմանը և 2019 թվականի նախահաշվի ոչ արդյունավետ պլանավորմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք վերահաշվարկել 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ պետական ոչ առևտրային կազմակերպությունների դեբիտորական պարտքի մնացորդները և ճշգրտել 2019 թվականին Մարզպետարանին ներկայացվող հաշվետվությունները:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

ՊՈԱԿ-ների կողմից մարզպետարան ներկայացված հաշվետվությունների և ՀՀ հաշվեքննիչ պալատի փաստացի հաշվարկված աշխատավարձերի /4111/ շեղումների մասով Ձեր կողմից ներկայացված ՊՈԱԿ-ներից պահանջվել է բացատրություն, ինչի արդյունքում մի քանիսի մասով արդեն տրվել են, իսկ մնացածի մասով կձեռնարկվեն միջոցներ շեղումների ճշգրտման ուղղությամբ:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ չեն ներկայացվել

2.5 Պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից վարվող աշխատաժամանակի տեղեկագրեր

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ «Արգավանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում աշխատաժամանակի տեղեկագրեր չեն ներկայացվում, որոնք հիմք կհանդիսանան

աշխատավարձի հաշվարկի համար, ինչպես նախատեսված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածով: Կազմակերպության կողմից ամսական կտրվածքով բացակայությունների մատյանի հիման վրա կազմվել են զեկուցագրեր այն աշխատակիցների մասով, որոնք հաշվետու ամսվա ընթացքում ունեցել են բացակայություններ: Նշված զեկուցագրերի հիման վրա կատարվել են աշխատավարձի հաշվարկներ: 2018 թվականի աշխատավարձի փաստացի ծախսը կազմել է 62,069.1 հազ. դրամ:

Ծախսի սկզբնական հաշվառման փաստաթղթերի ոչ պատշաճ կազմումը կարող է հանգեցնել ծախսի խեղաթյուրմանը:

Առաջարկություն

2016 թվականի փետրվարի 1-ի ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 37-Ն հրամանով հաստատվել են հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը: Հրամանի ձև ԾԽ-5 ձևաչափով սահմանվել է աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի օրինակելի ձև: Առաջարկում ենք աշխատավարձի հաշվարկները հիմնավորել նշված ձևաչափով պատրաստված սկզբնական հաշվառման փաստաթղթով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Առարկություններ չկան:

2.6 Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահին կատարված հատուցումներ

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ «Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2018 թվականի հունվարի 8-ին հաստատված 2017-2018 ուսումնական տարվա տարիֆիկացիոն ցուցակի համաձայն՝ աշխատողի ամսական ընդհանուր աշխատավարձը կազմել է 215.0 հազ. դրամ: 2018 թվականի հունվարի համար վերջինս ստացել է նշված հատուցումը՝ համաձայն տարիֆիկացիոն ցուցակի: Այնուհետև տրամադրվել է հրաման առանց թվագրման, համաձայն որի չեղյալ է համարվել տվյալ պաշտոնի տարիֆիկացիոն ցուցակով սահմանված ամսական ընդհանուր աշխատավարձը և սահմանվել է նոր աշխատավարձ՝ ամսական 142.0 հազ. դրամ չափով: 2018 թվականի փետրվարից սկսած՝ տվյալ աշխատողից պահանջել են տարիֆիկացիոն ցուցակով սահմանված, վճարված

աշխատավարձի ու հրամանով սահմանված նոր աշխատավարձի տարբերությունը՝ ամսական 10.0 հազ. դրամի չափով:

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 213 հոդվածի 3-րդ մասի՝ չի թույլատրվում աշխատողից պահել կամ գանձել օրենքի սխալ կիրառմամբ հաշվարկված և ավել վճարված աշխատավարձը, բացառությամբ հաշվարկային մեխանիկական սխալների դեպքերի:

Համաձայն 2010 թվականի հուլիսի 15-ի ՀՀ կառավարության թիվ 954-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 46-րդ կետի՝ հանրակրթության բնագավառում տարածքային կառավարման մարմնի իրավասությունն է հաստատել հանրակրթական դպրոցի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները:

Աշխատակցին ավել վճարված հատուցման պահումներն ապագա հատուցումներից, որը կատարվել է օրենքի սխալ կիրառմամբ, հանգեցնում է աշխատանքային օրենսգրքի դրույթների խախտմանը:

Սխալ հաստատված տարիֆիկացիոն ցուցակը վկայում է Մարզպետարանի կողմից իրականացվող հսկողության գործընթացների ոչ արդյունավետ իրականացմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք տարիֆիկացիոն ցուցակները հաստատել համաձայն կիրառելի օրենսդրության դրույթների:

Առաջարկում ենք չկատարել պահումներ աշխատակցից՝ սխալ հաստատված հատուցման չափով:

Հաշվեքնության օբյեկտի արձագանք

Առարկություններ չկան:

3. Մարզպետարանի կողմից տրված սոցիալական օգնության նպաստներ

«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի շրջանակում կատարված «Այլ նպաստներ» հոդվածով՝ մարզպետի համապատասխան որոշումներով 2018 թվականին 789 քաղաքացիների տրվել են 28,950.0 հազ.դրամ գումարի դրամական օգնություններ: Մարզպետարանը չի հաստատել դրամական օգնությունները տրամադրելու կարգ:

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ օգնություններն ամբողջությամբ տրվել են կանխիկ եղանակով: Գումարների տրամադրումն իրականացվել է դրամարկղային գործառնությունների կարգի խախտումներով: Դրամարկղային գրքի վարումը և դրամարկղի մուտքի և ելքի օրդերների դուրսգրումը չի կատարվել 2017 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՀ կառավարության թիվ 1260-Ն որոշմամբ սահմանված «Դրամարկղային գործառնությունների իրականացման, դրանց փաստաթղթավորման, դրամարկղային գրքի գրանցման և դրամարկղային գրքի վարման» կարգի դրույթներին համապատասխան: Մասնավորապես՝

- դրամարկղի գրքում և օրդերներում առկա են եղել ջնջումներ և ուղղումներ, դրամարկղի գրքում ուղղումները չեն կատարվել վերը նշված կարգով սահմանված պահանջներին համապատասխան.
- դրամարկղի գրքում գրանցումների ամսաթվերը և էջերի տիտղոսային մասում ժամանակահատվածները լրացված չեն եղել.
- 2018 թվականի դեկտեմբերի 27-ի դրամարկղի թիվ 753, 728 և 2018 թվականի հուլիսի 13-ի թիվ 343 ելքի օրդերներում վճարված գումարները թվերով լրացված չեն եղել.
- 2018 թվականի օգոստոսի 6-ի թիվ 452 դրամարկղի ելքի օրդերում բացակայել է ստացողի ստորագրությունը, սակայն դրամական միջոցները վճարվել են.
- համաձայն մարզպետի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 440 որոշման՝ սոցիալական աջակցության նպատակով պետք է հատկացվեր 1,865.0 հազ. դրամ գումար, սակայն համաձայն դրամարկղի ելքի օրդերների վճարվել է 1,855.0 հազ. դրամ, համաձայն դրամարկղի գրքի մնացորդի տվյալների՝ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամարկղի մնացորդը եղել է զրո, մինչդեռ դրամարկղում, համաձայն գրանցումների, պետք է լիներ գումարի մնացորդ.
- ՀՀ Արմավիրի մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 353 որոշման համաձայն՝ շահառուի համար նախատեսվել է 30.0 հազ. դրամ գումարի չափով օգնություն, որը վերջինս չի ստացել, սակայն նշված գումարի չափով դրամարկղի գրքում դրամարկղի մնացորդը պակաս է ներկայացվել:

Դրամարկղային գործառնությունների ոչ պատշաճ իրականացումը հանգեցնում է հսկողության գործընթացների անարդյունավետ կատարմանը և կարող է հանգեցնել դրամական միջոցների յուրացմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք դրամարկղային գործառնություններն իրականացնել «Դրամարկղային գործառնությունների իրականացման, դրանց փաստաթղթավորման, դրամարկղային գրքի գրանցման և դրամարկղային գրքի վարման» կարգի դրույթներին համապատասխան:

Առաջարկում ենք մշակել սոցիալական օգնությունների տրամադրման կարգ, սահմանել շահառուների սոցիալական վիճակի գնահատման չափանիշներ և չափորոշիչներ, գումարների տրամադրման եղանակներ և դրանց նկատմամբ հսկողության գործընթացներ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից սոցիալական օգնության նպաստների վճարման հետ կապված տեղեկացնում ենք, որ որևէ իրավական նորմատիվ ակտով նախատեսված չէ կարգ, որով մարզպետարանը կարողանա առաջնորդվել, այդ իսկ պատճառով մարզպետի 2018 թվականի հունիսի 15-ի թիվ 44 կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով, որը քննարկում է և, ըստ կարիքավորության աստիճանի, մարզպետին է ներկայացնում ընտանիքին առաջակվող դրամական աջակցության չափը:

Առաջարկությունը ընդունելի է, կձեռնարկվեն միջոցներ դրամական օգնությունների տրանմադրման կարգ մշակելու ուղղությամբ:

Տարեսկզբին դրամարկղի գրքի ավարտվելու և նոր դրամարկղի գիրքը գործածության մեջ դնելու ժամանակ թյուրիմացաբար չլրացված, սակայն փաստացի առկա 40.0 հազ.դրամ դրամարկղի մնացորդը 13.12.2019 թվականին ձևակերպվել է դրամարկղի գրքում:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ չեն ներկայացվել, ներկայացվել է բացատրություն:են

4. Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման ծախսեր

Մարզպետարանը 2018 թվականին մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման «բավարար մակարդակի»

աշխատանքների իրականացման նպատակով երեք կազմակերպությունների հետ 2018 թվականի հունվարի 25-ին կնքել է 54,605.0 հազ. դրամ գումարի համաձայնագրեր:

Նշված աշխատանքների իրականացման նպատակով «Շրջանակային համաձայնագրեր» ընթացակարգով՝ երեք չափաբաժիններով 2015 թվականին կայացել է մրցույթ, որի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունների հետ 2015 թվականի դեկտեմբերի 30-ին կնքվել են պայմանագրեր՝ հինգ տարի ժամկետով:

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Մարզպետարանը մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման իրականացման և կազմակերպման ժամանակ առաջնորդվել է 2010 թվականի նոյեմբերի 4-ի ՀՀ կառավարության թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման» կարգով, սակայն ճանապարհների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման միջանկյալ դիտարկումներն իրականացրել է ամսական մեկ անգամ, մինչդեռ կարգի 26-րդ կետով դիտարկումները յուրաքանչյուր ամիս պետք է իրականացվեին առնվազն երեք անգամ:

Սահմանված ժամկետներում և պարբերականությամբ ճանապարհների վիճակի միջանկյալ դիտարկումներ չիրականացնելը հանգեցնում է ճանապարհների անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջների և կապալառուների պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության թերացմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք Մարզպետարանին ճանապարհների միջանկյալ դիտարկումների իրականացումը կատարել պահանջվող պարբերականությամբ, սահմանել միջանկյալ դիտարկումների ամսական ժամանակացույցներ, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանմանը ապահովել անհրաժեշտ միջոցներով (տրանսպորտային միջոցներ, գործուղման ծախսեր և այլն)՝ դիտարկումները պատշաճ ժամանակին և մակարդակով իրականացնելու համար:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Առարկություններ չկան:

5. Մշակութային օբյեկտների շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում

Մարզպետարանին 2018 թվականի պետական բյուջեից «Մշակութային օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով հատկացվել է 18,636.7 հազ.դրամ գումար, որով նախատեսվել է իրականացնել Շենիկ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների մի մասը:

Շենիկ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով մարզպետարանը 2017 թվականին կազմակերպել է մրցույթ, որի արդյունքում հաղթող ճանաչված ընկերության՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի հետ 2017 թվականի մայիսի 16-ին կնքել է թիվ ՀՀ ԱՄ ԲԸԱՇՁԲ-17/01 պայմանագիրը:

2017 և 2018 թվականներին կատարված վերանորոգման աշխատանքների գումարները համապատասխանել են պայմանագրով և պետական բյուջեով սահմանված գումարին, սակայն 2017 և 2018 թվականների հաստատված նախահաշիվներում կատարվել են ծավալային որոշ փոփոխություններ՝ կատարվել են որոշ լրացուցիչ աշխատանքներ, միաժամանակ որոշ աշխատանքների ծավալներ նախահաշիվներից նվազեցվել են՝ չփոփոխելով պայմանագրով սահմանված նախահաշվային ընդհանուր գումարները: Նշված փոփոխությունների նպատակով կազմվել են աշխատանքների փոփոխված ծավալների համադրման փաստաթղթեր:

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ.

- 2018 և 2017 թվականների նախահաշիվներում կատարված փոփոխությունները պատշաճ ձևով չեն փաստաթղթավորվել և չեն հիմնավորվել: Փոփոխությունների արդյունքում պայմանագրի ծավալաթերթը (նախագծանախահաշվային փաստաթղթերը) չի փոփոխվել, չկատարված աշխատանքների մասով չի հիմնավորվել դրանց կատարման պահանջի վերացումը, լրացուցիչ աշխատանքները կատարվել են նախահաշվից հանված աշխատանքների գումարների հաշվին, չի հիմնավորվել դրանց հետագայում կատարման կամ չկատարման անհրաժեշտությունը:
- 2018 թվականի նախահաշվից համադրման փաստաթղթի միջոցով հանվել են «20 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք, անցքերի բետոնացմամբ և ամրանավորումով» և «Շարվածքի ամրանավորում Ac-1» համապատասխանաբար 14.87 խմ և 0.18 տոննա ծավալով աշխատանքները, սակայն չեն նվազեցվել «Պատերի լավորակ գաջե սվաղ» և/կամ «Պատերի լավորակ ց/ավազե սվաղ» աշխատանքային կետերը, որոնք 2018 թվականին կատարված են եղել պայմանագրով սահմանված ամբողջ ծավալների 100 տոկոսի չափով:

- պայմանագրի ծավալաթերթով նախատեսված «բացվածքներ, հարդարում և հատակներ» կետերով աշխատանքները գրեթե բոլոր կետերով 2018 թվականին ավարտվել են, մասնակի են կատարված միայն հատակների և կախովի առաստաղների մասով աշխատանքները, որոնց մասով չկատարված ծավալները կազմում են 30-ից 40 տոկոս, իսկ պատերի գաջե և ցեմենտ-ավազե սվաղ աշխատանքները կատարվել են ամբողջությամբ, ներկման աշխատանքները՝ 50 տոկոս: Սակայն «Ներքին էլեկտրական ցանցեր» բաժնով նախատեսված աշխատանքների զգալի մասով կատարողական ակտեր առկա չեն: Ներկայացվածից ակնհայտ է, որ հարդարման և ներքին էլեկտրական ցանցի մոնտաժման աշխատանքների կատարման համամասնությունների մասով առկա է անհամապատասխանություն, ինչը հիմնականում պայմանավորված է շինարարական աշխատանքների նախագծի թերություններով:

Պայմանագրով նախատեսված աշխատանքներում փոփոխությունների կատարման հիմնավորումների և ծավալներում փոփոխությունների չկատարումը հանգեցնում է կատարվող աշխատանքների ծավալների որոշման և կապալառուի պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության թերացմանը, հաջորդ ժամանակաշրջանում իրականացվելիք աշխատանքների նախահաշիվների կազմման անճշտությունների:

Առաջարկություն

Առաջարկում ենք աշխատանքների ծավալներում փոփոխությունները կատարել պայմանագրի փոփոխության վերաբերյալ համաձայնագրեր կնքելու և պայմանագրի ծավալաթերթի, ինչպես նաև համապատասխան տարվա՝ 2018 թվականի նախահաշվում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու միջոցով: Աշխատանքների ծավալների փոփոխությունները հիմնավորել՝ կազմելով համապատասխան փաստաթղթեր, արձանագրելով փոփոխությունների անհրաժեշտությունը և հիմնավորումները:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Տեղեկացնում ենք, որ կկատարվեն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի համապատասխան ճշգրտումներ, իսկ փաստացի կատարված աշխատանքները համապատասխանում են համադրման փաստաթղթերով արձանագրված ծավալներին:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ չեն ներկայացվել, ներկայացվել է բացատրություն:

6. Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար

2018 թվականին Մարզպետարանը «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» ծրագրով «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով կատարել են 18,636.7 հազ.դրամ գումարի ծախսեր, որով սուբվենցիաների համապատասխան պայմանագրերով ֆինանսավորվել են (փոխհատուցվել են) թվով 16 երաժշտական դպրոցներում սովորող 163 աշակերտների ուսման վարձերը:

Համայնքապետարաններին ֆինանսավորումը կատարվել է՝ համաձայն սուբվենցիայի պայմանագրերի և դրանցով սահմանված ժամանակացույցերին համապատասխան:

Երաժշտական և արվեստի դպրոցները 2018 թվականի համար Մարզպետարան են ներկայացրել հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների հիմնական ցուցանիշների, նվագարանների, դասարանների և սովորողների թվի վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, սպորտի և երիտասարդության նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից սահմանված ձևաչափով հաշվետվություններ:

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ երաժշտական և արվեստի դպրոցների ներկայացրած հաշվետվությունների տարբեր բաժինների տվյալների, ինչպես նաև վերջիններիս կողմից տրամադրված տեղեկատվության (տեղեկանքների) և մարզպետարանի «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով 2018 թվականին ուսուցման համար Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցների բաշխման հաշվետվության» (հավելված N5, աղյուսակ N17) տվյալների միջև առկա են անհամապատասխանություններ: Հաշվետվությունները լրացված են թերի՝ կան բաց թողնված լրացման դաշտեր:

Սուբվենցիայի պայմանագրերով նախատեսված և ֆինանսավորված աշակերտների ընդհանուր թվաքանակը համապատասխանում է հաշվետվությունների և տեղեկանքների տվյալների հետ: Սակայն նախարարության սահմանված ձևաչափով ներկայացված հաշվետվության առանձին բաժինների տվյալների միջև առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հաշվետվությամբ ներկայացված վճարովի և անվճար սովորողների ընդհանուր թվի և նույն տվյալները այլ բաժիններով՝ ըստ նվագարանների և դասարանների, ներկայացված թվերի միջև առկա են անհամապատասխանություններ, կան նաև անհամապատասխանություններ

հաշվետվության և տեղեկանքներով ներկայացված սովորողների տվյալների միջև, որոնք հիմնականում շեղվում են ըստ նվագարանների սովորողների:

Որպես վերը նշված շեղումների օրինակ՝ ներկայացվում են հաշվետվությամբ ներկայացված աշակերտների փաստացի թվի և վճարովի ու անվճար սովորողների ընդհանուր թվաքանակի միջև առկա հետևյալ անհամապատասխանությունները.

Հ/Հ	Դպրոցի անվանումը	Սովորողների փաստացի թիվ	Անվճար սովորողներ	Վճարովի սովորողներ	Շեղում
1	2	3	4	5	6=3-4-5
1	«Մեծամորի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ	153	13	110	30
2	«Արևիկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	48	7	47	(6)
3	«Նալբանդյանի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	19	5	59	(45)
4	«Փարաքարի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	174	47	131	(4)
5	«Էջմիածնի թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	303	12	217	74
6	«Էջմիածնի թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	263	9	222	32
7	«Դալարիկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	40	2	35	3
8	«Արշալույսի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	91	3	16	72

Մարզպետարան ներկայացվող հաշվետվողականության նկատմամբ անհրաժեշտ հսկողության չիրականացումը հանգեցնում է պետական բյուջեից հատկացվող սուբվենցիայի գումարների նպատակային օգտագործման ռիսկերի առաջացմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք սահմանել հետևողական հսկողություն ներկայացվող հաշվետվություններում արտացոլված տվյալների ճշտության և համապատասխանության ստուգման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում սահմանել հաշվետվողականության այլ ձևաչափեր, որոնք հնարավորություն կտան ստանալ անհրաժեշտ և պատշաճ տեղեկատվություն տրամադրվող գումարների վերաբերյալ՝ ըստ նպատակի ծախսման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար սույն կետում նշված մարզի թվով

ութ երաժշտական և արվեստի դպրոցների կողմից ներկայացված 2018 թվականի կատարված աշխատանքների հիմնական ցուցանիշների, նվագարանների, դասարանների և սովորողների թվի վերաբերյալ ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից սահմանված ձևաչափով հաշվետվություններում առկա՝ սովորողների ընդհանուր թվի և տարբեր բաժիններում վճարովի և անվճար սովորող աշակերտների թվաքանակի միջև անհամապատասխանությունները պայմանավորված են նրանով, որ հաշվետվության ձևաչափում համապատասխան բաժիններ և սյունակներ չեն նախատեսվել երաժշտական և արվեստի դպրոցում գործող պարարվեստի, վոկալ, կերպարվեստի և այլ բաժիններում սովորող աշակերտների մասով, ինչպես նաև հաշվետվությունը ներկայացնողների անփութության և ճիշտ չկողմնորոշվելու պատճառով, որոնցից յուրաքանչյուրի վերաբերյալ դպրոցի տնօրենի կողմից ներկայացվում է բացատրագիր:

Նշված դպրոցների տնօրենների կողմից ներկայացված բացատրագրերի համաձայն՝ ընդհանուր առմամբ երաժշտական և արվեստի դպրոցների աշակերտների ընդհանուր թվի և վճարովի ու անվճար սովորողների թվերի միջև անհամապատասխանություններ չկան:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ չեն ներկայացվել, ներկայացվել է բացատրություն:

7. Կրթական օբյեկտների շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում

Կրթական օբյեկտների՝ ՀՀ Արմավիրի մարզի Թաիրով միջնակարգ դպրոցի, շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման նպատակով 2018 թվականին պետական բյուջեից Մարզպետարանին հատկացվել է 119,092.0 հազ. դրամ գումար, փաստացի ծախսը կազմել է 119,092.0 հազ. դրամ:

Նշված նպատակով Մարզպետարանի և «Սյունիք» ՍՊԸ-ի միջև 2017 թվականի մայիսի 16-ին կնքվել է թիվ ՀՀ ԱՄ ԲԸԱՇՁԲ-17/02 պայմանագիրը: Ըստ պայմանագրի՝ աշխատանքների ընդհանուր գումարը կազմել է 154,800.0 հազ.դրամ, որից 2018 թվականին կատարվող աշխատանքների գումարը, համաձայն 2018 թվականի մայիսի 8-ի թիվ 1 համաձայնագրի, կազմել է 125,360.0 հազ.դրամ, իսկ աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է 2018 թվականի դեկտեմբերի 20-ը:

Անհամապատասխանություն կամ խեղաթուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2018 թվականին կատարվել են հաստատված նախահաշիվներով նախատեսված աշխատանքների ծավալային որոշ փոփոխություններ՝ կատարվել են լրացուցիչ աշխատանքներ, իսկ որոշ աշխատանքների ծավալներ նվազեցվել են: Աշխատանքների ծավալաթերթում կատարված փոփոխությունները լիարժեք ձևով չեն փաստաթղթավորվել և չեն հիմնավորվել: Կատարված փոփոխությունների մասով կազմվել են աշխատանքների փոփոխված ծավալների համադրման փաստաթղթեր և չեն հիմնավորվել ավելացված աշխատանքների կատարման անհրաժեշտությունը և չկատարված աշխատանքների մասով դրանց պահանջի վերացման հիմնավորումները:

Պայմանագրով նախատեսված աշխատանքներում փոփոխությունների կատարման հիմնավորումների չներկայացումը հանգեցնում է կատարվող աշխատանքների նկատմամբ թույլ հսկողության գործընթացների:

Առաջարկություն

Առաջարկում ենք աշխատանքների ծավալներում փոփոխությունները կատարել պայմանագրի փոփոխության վերաբերյալ համաձայնագրեր կնքելու և յուրաքանչյուր աշխատանքի ավելացման և նվազեցման մասով հիմնավորումների ներկայացման հիմքով որոշումների կայացման միջոցով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Տեղեկացնում ենք, որ կկատարվեն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի համապատասխան ճշգրտումներ, իսկ փաստացի կատարված աշխատանքները համապատասխանում են համադրման փաստաթղթերով արձանագրված ծավալներին:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ չեն ներկայացվել, ներկայացվել է բացատրություն:

8. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից համայնքներին տրված կապիտալ սուբվենցիաներ

2018 թվականին Մարզպետարանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հիման վրա կապիտալ սուբվենցիաների

գծով համայնքներին փոխանցել է 41,376.8 հազ.դրամ գումար: Նշված նպատակով Մարզպետարանը հետևյալ համայնքների հետ կնքել է սուբվենցիայի հատկացման պայմանագրեր.

Որոշման		Սուբվենցիաների հատկացման նպատակը	Գումարը (հազ.դրամ)
ամսաթիվը	համարը		
26.07.2018	920-Ն	Ջրարբի համայնքի գործարար կենտրոնի բարեկարգում՝ ասֆալտում	5,109.0
07.09.2018	1127-Ն	Դալարիկ համայնքի Շահումյան փողոցի ասֆալտապատում	3,519.0
27.09.2018	1028-Ն	Տալվորիկ համայնքի խմելու ջրի պոմպի և շարժիչի ձեռքբերում	1,120.0
01.11.2018	1211-Ն	Արգավանդ համայնքի ոռոգման խորքային հորի վերականգնում և կահավորում	5,650.0
29.11.2018	1356-Ն	Ակնալիճ համայնքի Շահումյան փողոցի ասֆալտապատում	6,480.0
20.12.2018	1496-Ն	Լուսազյուղ համայնքի Ն.Ղարիբյան փողոցի հիմնանորոգում	12,942.0
20.12.2018	1496-Ն	Արագած համայնքի հանդիսությունների սրահի կահավորում	3,212.4
20.12.2018	1477-Ն	Հայկաշեն համայնքի մանկապարտեզի կահավորում	3,344.4
Ընդամենը			41,376.8

8.1 Ջրարբի համայնքի գործարար կենտրոնի բարեկարգում՝ ասֆալտապատում

Ջրարբի համայնքի գործարար կենտրոնի բարեկարգման՝ ասֆալտապատման նպատակով Մարզպետարանի և Ջրարբի համայնքի միջև 2018 թվականի սեպտեմբերի 19-ին կնքվել է սուբվենցիայի տրամադրման պայմանագիրը, որով ֆինանսավորվել է համայնքի Թումանյան փողոցի (413մ հատվածի) հիմնանորոգման աշխատանքների արժեքի՝ 12,722.8 հազ.դրամի գումարի 40 տոկոսը՝ 5,109.1 հազ.դրամ գումար: Ծրագրի իրականացման նպատակով համայնքապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 10-ին կնքվել է թիվ ՀՀ ԱՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-01/18 կապալի պայմանագիրը: Աշխատանքներն ավարտվել են 2018 թվականի հուլիսի 8-ին, որոնց դիմաց վերջին վճարումը համայնքապետարանի կողմից կատարվել է 2018 թվականի սեպտեմբերի 5-ին, իսկ մարզպետարանի կողմից համայնքին ֆինանսավորումը կատարվել է 2018 թվականի սեպտեմբերի 25-ին:

Համաձայն սուբվենցիայի պայմանագրի 3.2 կետի՝ պայմանագրով նշված նպատակի իրականացումից հետո 30 օրվա ընթացքում համայնքապետարանը Մարզպետարանին գրավոր պետք է ներկայացնի աշխատանքների կատարման մասին վերջնական հաշվետվություն, իսկ համաձայն կապալի պայմանագրի 4.6 կետի՝ աշխատանքները համարվում են ամբողջական ընդունված պետական կառավարման մարմնի՝ 2018

թվականի մարտի 19-ի ՀՀ կառավարության թիվ 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կատարված աշխատանքները ընդունվելու դեպքում:

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ.

- համայնքների կողմից հաշվետվություններ Մարզպետարանին չեն ներկայացվել, ներկայացվել են կատարված ծախսերը հիմնավորող և դրանց վերաբերվող փաստաթղթեր,
- համայնքի կողմից Մարզպետարան ներկայացված փաստաթղթերի փաթեթում բացակայել է 2018 թվականի մարտի 19-ի ՀՀ կառավարության թիվ 596-Ն որոշմամբ սահմանված կատարված աշխատանքների ավարտական ակտը:

Տրամադրված սուբվենցիայի մասով հաշվետվությունների չներկայացումը, ինչպես նաև Մարզպետարանի կողմից հաշվետվողականության և ներկայացվող փաստաթղթերի նկատմամբ նվազագույն պահանջներ չսահմանելը թուլացնում է Մարզպետարանի կողմից համայնքների նկատմամբ իրականացվող հսկողության գործընթացները և հանգեցնում է տրամադրված գումարների նպատակային օգտագործման և նախատեսված արդյունքներին հասնելու ռիսկերի մակարդակի բարձրացմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք Մարզպետարանին սահմանել համայնքների կողմից ներկայացվող հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվության և փաստաթղթերի նկատմամբ նվազագույն պահանջներ, ինչպես նաև համայնքների կողմից իրականացվող աշխատանքների նկատմամբ սահմանել հսկողության գործընթացներ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Առարկություններ չկան:

8.2 Դալարիկ համայնքի Շահումյան փողոցի ասֆալտապատում

Սուբվենցիայի պայմանագիրը Մարզպետարանի և համայնքի միջև կնքվել է 2018 թվականի նոյեմբերի 5-ին, ֆինանսավորվել է Դալարիկ համայնքի Շահումյան փողոցի ասֆալտապատման աշխատանքների արժեքի՝ 10,200.0 հազ.դրամի գումարի 35.4 տոկոսը՝ 3,519.0 հազ.դրամ գումար:

Ծրագրի իրականացման նպատակով համայնքապետարանի և «ՍԱՄԻ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 5-ին կնքվել է թիվ ՀՀ ԱՄ ԴՀ ԳՀԱՇՁԲ-18/1 կապալի պայմանագիրը: Համաձայն կատարողական ակտերի՝ աշխատանքներն ավարտվել են 2018 թվականի հուլիսի 4-ին՝ պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետից չորս օր ուշացումով: Մարզպետարանի կողմից համայնքին ֆինանսավորումը կատարվել է 2018 թվականին նոյեմբերի 11-ին:

Համաձայն սուբվենցիայի պայմանագրի 3.2 կետի՝ պայմանագրով նշված նպատակի իրականացումից հետո 30 օրվա ընթացքում համայնքապետարանը Մարզպետարանին գրավոր պետք է ներկայացնի աշխատանքների կատարման մասին վերջնական հաշվետվություն:

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ համայնքների կողմից հաշվետվություններ Մարզպետարանին չեն ներկայացվել, ներկայացվել են կատարված ծախսերը հիմնավորող և դրանց վերաբերվող փաստաթղթեր:

Տրամադրված սուբվենցիայի մասով հաշվետվությունների չներկայացումը, ինչպես նաև Մարզպետարանի կողմից հաշվետվողականության և ներկայացվող փաստաթղթերի նկատմամբ նվազագույն պահանջների չսահմանելը թուլացնում է Մարզպետարանի կողմից համայնքների նկատմամբ իրականացվող հսկողության գործընթացները և հանգեցնում է տրամադրված գումարների նպատակային օգտագործման և նախատեսված արդյունքներին հասնելու ռիսկերի մակարդակի բարձրացմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք Մարզպետարանին սահմանել համայնքների կողմից ներկայացվող հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվության և փաստաթղթերի նկատմամբ նվազագույն պահանջներ, ինչպես նաև համայնքների կողմից իրականացվող աշխատանքների նկատմամբ սահմանել հսկողության գործընթացներ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Առարկություններ չկան:

8.3 Տալվորիկ համայնքի խմելու ջրի պոմպի և շարժիչի ձեռքբերում

Սուբվենցիայի պայմանագիրը Մարզպետարանի և համայնքի միջև կնքվել է 2018 թվականի հոկտեմբերի 22-ին: Պայմանագրով ֆինանսավորվել է Տալվորիկ համայնքի խմելու ջրի պոմպի և շարժիչի ձեռքբերման գումարի՝ 1,350.0 հազ.դրամ, 83 տոկոսը՝ 1,120.0 հազ.դրամ գումար:

Ծրագրի իրականացման նպատակով համայնքապետարանի և անհատ ձեռնարկատեր Հրաչյա Պետրոսյանի միջև 2018 թվականի նոյեմբերի 29-ին կնքվել է թիվ ԱՄՏՀ-ԳՀ ԱՊՁԲ-18/01 պայմանագիրը: Համաձայն ապրանքների մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության ապրանքները մատակարարվել են 2018 թվականի հոկտեմբերի 30-ին՝ պայմանագրի կնքումից մեկ օր հետո: Մարզպետարանի կողմից համայնքին ֆինանսավորումը կատարվել է 2018 թվականի նոյեմբերի 3-ին:

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ.

- անհատ ձեռնարկատեր Հրաչյա Պետրոսյանի հետ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիրը կնքվել է 2018 թվականի նոյեմբերի 29-ին, սակայն պայմանագրի ապահովման տուժանքի մասին հայտարարագրի ամսաթիվը 2018 թվականի նոյեմբերի 30-ն է,
- հայտերի գրանցամատյանում անհատ ձեռնարկատեր Հրաչյա Պետրոսյանի հայտը գրանցվել է 2018 թվականի նոյեմբերի 19-ին, որտեղ հայտը գրանցողի ստորագրությունը բացակայում է:

Առաջարկություն

Առաջարկում ենք Մարզպետարանին իրականացնել պատշաճ վերահսկողություն համայնքների կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի կատարման նկատմամբ, մասնավորապես՝ ծրագրերի շրջանակում իրականացվող գնումների գործընթացի նկատմամբ՝ պահպանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն սահմանված պահանջները:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Առարկություններ չկան:

8.4 Ակնալիճ համայնքի Շահումյան փողոցի ասֆալտապատում

Սուբվենցիայի պայմանագիրը Մարզպետարանի և համայնքի միջև կնքվել է 2018 թվականի դեկտեմբերի 21-ին, ֆինանսավորվել է Ակնալիճ համայնքի Շահումյան փողոցի և նրանից դեպի ավտոմայրուղի ընկած հատվածի բարեկարգման և ընդհանուր ասֆալտապատման աշխատանքների արժեքի՝ 16,200.0 հազ.դրամի գումարի 40 տոկոսը՝ 6,480.0 հազ.դրամ գումար:

Ծրագրի իրականացման նպատակով համայնքապետարանի և «ԷԼԻՏ ՍԹԱՐ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի հոկտեմբերի 2-ին կնքվել է թիվ ԱՄ ԼՀ ԳՀԱՇՁԲ-18/01 կապալի պայմանագիրը: Համաձայն կատարողական ակտերի՝ աշխատանքներն ավարտվել են 2018 թվականի հոկտեմբերի 30-ին: Մարզպետարանի կողմից համայնքին վճարումը կատարվել է սուբվենցիայի պայմանագրի գործողության ժամկետից մեկ օր ուշացումով՝ 2018 թվականի դեկտեմբերի 26-ին:

Համաձայն սուբվենցիայի պայմանագրի 3.2 կետի՝ պայմանագրով նշված նպատակի իրականացումից հետո 30 օրվա ընթացքում համայնքապետարանը Մարզպետարանին գրավոր պետք է ներկայացնի աշխատանքների կատարման մասին վերջնական հաշվետվություն:

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ համայնքների կողմից հաշվետվություններ Մարզպետարանին չեն ներկայացվել, ներկայացվել են կատարված ծախսերը հիմնավորող և դրանց վերաբերվող փաստաթղթեր:

Առաջարկություն

Առաջարկում ենք Մարզպետարանին սահմանել համայնքների կողմից ներկայացվող հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվության և փաստաթղթերի նկատմամբ նվազագույն պահանջներ, համայնքների կողմից իրականացվող աշխատանքների նկատմամբ սահմանել հսկողության գործընթացներ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Առարկություններ չկան:

8.5 Լուսազյուղ համայնքի Ն.Դարիբյան փողոցի հիմնանորոգում

Սուբվենցիայի պայմանագիրը Մարզպետարանի և համայնքի միջև կնքվել է 2018 թվականի դեկտեմբերի 24-ին, ֆինանսավորվել է համայնքի Ն.Դարիբյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների արժեքի՝ 32,350.0 հազ.դրամի գումարի 40 տոկոսը՝ 12,942.0 հազ.դրամ գումար:

Ծրագրի իրականացման նպատակով համայնքապետարանի և Խաչատուրյանի «Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի հոկտեմբերի 2-ին կնքվել է թիվ ԱՄ ԼՀ ԳՀԱՇԶԲ-18/01 կապալի պայմանագիրը: Համաձայն կատարողական ակտերի՝ աշխատանքներն ավարտվել են 2018 թվականի հոկտեմբերի 10-ին, որոնց դիմաց վերջին վճարումը համայնքապետարանի կողմից կատարվել է 2018 թվականի դեկտեմբերի 27-ին: Մարզպետարանի կողմից համայնքին ֆինանսավորումը կատարվել է 2018 թվականի դեկտեմբերի 27-ին՝ պայմանագրի գործողության ժամկետից երկու օր ուշացումով:

Համաձայն սուբվենցիայի պայմանագրի 3.2 կետի՝ պայմանագրով նշված նպատակի իրականացումից հետո 30 օրվա ընթացքում համայնքապետարանը Մարզպետարանին գրավոր պետք է ներկայացնի աշխատանքների կատարման մասին վերջնական հաշվետվություն:

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ համայնքների կողմից հաշվետվություններ Մարզպետարանին չեն ներկայացվել, ներկայացվել են կատարված ծախսերը հիմնավորող և դրանց վերաբերվող փաստաթղթեր:

Առաջարկություն

Առաջարկում ենք Մարզպետարանին սահմանել համայնքների կողմից ներկայացվող հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվության և փաստաթղթերի նկատմամբ նվազագույն պահանջներ, համայնքների կողմից իրականացվող աշխատանքների նկատմամբ սահմանել հսկողության գործընթացներ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Առարկություններ չկան: